Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՄԱՍՆԱԿՑԵՑ ՆՅՈՒ ՅՈՐՔԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ԱՄԱՆՈՐՅԱ ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՆԸ

Նոր տարվա ուրախ առիթով Նյու Յորքի Սուրբ Վարդան Մայր եկեղեցում տեղի ունեցավ տոնական համերգ, որին ներկա էր նաև Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Հանդիսությունն սկսվեց մեծաթիվ հավատացյալների և հոգևորականաց դասի համատեղ աղոթքով, որից հետո ներկաներին բարի-գալստյան խոսք հղեց եկեղեցու լուսարարապետ արժանապատիվ Տ. Մարտիրոս քհն. Ձևյանը:

Ջերմությամբ ընդունվեցին Փրովիդենսի պատանեկան և մանկական երգչախմբերի, Վաթերթաունի մանկական երգչախմբի, Նյու Յորքի և Նյու Ջերսիի ամենօրյա և շաբաթօրյա հայկական վարժարանների աշակերտության միացյալ, ինչպես նաև Մայր եկեղեցու երգչախմբերի ելույթները:

Այնուհետև ներկաներին Ամանորի և Սուրբ Ծննդյան առիթով իր շնորհավորանքի պատգամը տվեց Ամերիկայի հայոց Արևելյան թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանը: Իր խոսքում Սրբազան Հայրը հատուկ անդրադարձ կատարեց Ամենայն Հայոց Հայրապետի օրհնաբեր ներկայությանը տաճարում՝ Վեհափառ Հորը մաղթելով շուտափույթ և կատարյալ առողջություն:

Հայ ժողովրդի հավատավոր զավակներին իր ուղերձը հղեց նաև Երուսաղեմի հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանը:

Հանդիսության վերջում ներկա հավատացյալներին իր հայրապետական պատգամն ու հայրական օրհնանքը բաշխեց Գարեգին Ա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը՝ իր խոսքի առանցքը դարձնելով Աստվածորդուց թխող անապակ սերն ու անսահման ցվիրումը, որի հենքը մարդկության փրկությունն է և երկնից Արքայությունը: Արդեն 2000 տարի շարունակ համայն քրիստոնյա աշխարհն ընթանում է Բեթղեհեմյան աստղի ուղենշած շավղով և իր բազմամյա խոտորումներով աղեցուն ճամփին միշտ էլ ձգտել է հասնել վեհին, կատարյալին ու վսեմին: Եվ ամեն մի նոր եկող տարով ու Տիրոջ հրաշափառ Սուրբ Ծննդյան մեծ ավետիսով նորոգում է հայ հավատավորն իր ուխտը Բարձրյալի հետ՝ հոգով միաձուլվելով օրվա անմեկնելի խորհրդին, բարձրաձայն կամ շշուկով կրկնելով՝ Քրիստոս ծնավ և հայտնեցավ...

Տոնական համերգին ներկա էր նաև ՄԱԿ-ում Հայաստանի Հանրապետության մշտական ներկայացուցիչ տիար Մովսես Աբելյանը: